

ԻՆՉՈՒ ԵՆ ՊՐԲՍԻԿՆԵՐԸ «ՄՈՒՐՏԵՈՒ» ԿՈՉՈՒՄ ՀՍՑԵՐԻՆ

(Մի հատուած պատմութիւնից կից պարսկական
աւանդութեան հետ):

1605 թուին Շահարաս սուլթինը Օսմանցիներից խլելով Թաւրիզից սկսած մինչև Երևան, մի կարճ ժամանակ տիրեց ալդ ևրկրներին և ապա՝ զանազան քաղաքական միտումների շնորհիւ՝ քանդեց, աւերեց, այրեց ու ամալացրեց Երևանից սկսած մինչև Զուղա բոլոր գտնուած քաղաքները, գիւղերը, աւանները և ամբողջ ազգաբնակչութիւնը քշեց, տարաւ Պարսկաստան. իսկ հայերին հասցրեց Սպահան ու տեղաւորեց նրանց ինչպէս ալդ քաղաքում, նոյնպէս և նրա շրջակայքում:

Ակզբում թէև Շահաբասը մեծ հովանաւորութիւն և արտօնութիւն շնորհեց հայերին, մինչև անգամ շատ թուրքերից խլելով լաւ հողերն ու քաղաքի լաւ տեղերը հայերին տուեց որպէս զի նրանք աւելի սերտ կապուած մնան իր երկրում, բայց այնուամենայնիւ հայերը չէին կարողանում լարմարուել ալդ նոր, զօրով կայցրած հայրենիքում. որովհետեւ, մի կողմից զանազան ձախորդ հանգամանքների շնորհիւ, միւս կողմից պարսիկների խորթ հայեացքի ու ձրիակերութեան պատճառով, հետզհետեւ ոչնչանում էր նրանց ունեցած-չունեցածը և մի կտոր հացի անգամ կարօտ էին մնում. ուստի կամաց-կամաց, դրանցից շատերը մի կերպ և գաղտագողի փախչում էին իրենց աւերուած երկրները:

Ալդ իմանալով Շահաբասը այլատուում էր ամեն կերպ ալդ դարձի առաջն առնել մինչև անգամ նա մտածեց բերել տալ Սպահան սուրբ Էջմիածնի վանքի քարերը, այնտեղի խաչը, ամետարանը և սուրբ Լուսաւորչի Աջն ու մի նոր Էջմիածնի վանք կառուցանել այնտեղ և նոյն իսկ միւռնօրհնել տալ նրա մէջ ու այնտեղից սփռել ամենուրեք, որպէս զի, գէթ առ ժամանակ, հայերի սիրտն ալդգիսով աւելի կայցրած պահի իր երկրին և լիտ գաղթելու առաջն առնի. մինչև որ կգալ ժամանակը և կլաջողեցնի իր նուիրական, իսկ հայերի համար կորստաբեր, մտքերի իրագործումը:

Բայց իրեն և իր մտադրութիւններին անգիտակցաբար խոչնդոտ էր զառնում նոյն իսկ պարսիկ ժողովուրդը:

Եւ լիբաւի, պարսիկները զալրացած, որ անհաւատներն ալդքան պաշտպանուում են իրենց պետից, չէին կարողանում մարտել ալդ հանգամանքը. ուստի իրենց անգթութիւնները հասցրին մինչ ալս աստիճան, որ կոյն ու լծկանները դուրս էին քաշուում հալի տնից, ձմեռուալ պաշար-ցամաք հացն անգամ խլում էր, տանում, շորերն ու փալասները հանում էին նրա տանից, կերակրով պղինձն անգամ օջախի վերալից վերցւում էր և տէրը ձեռքերը ծալած կանգնած էր մնում. մի խօսքով այն օրին հասան հալերը, որ ինչ որ հալին էր — պատկանում էր ամեն մի ջերմեւանդ պարսկի և ամեն մի պարսիկ անսահման տէր էր և իշխան իրենց երկրում գտնուած հալերի...

Ճշմարիտ է, թէն հալերը շարունակ բողոքում էին տեղական պարսիկ իշխանաւորներին, բայց ձուլը գլխիցն էր հոտել — նրանք էլ նոյն կարծիքի էին, ինչ կարծիքի որ էր ամբողջը:

Եւ այսպէս շատ տեւել էր կարող. հալերի համբերութեան չափ ու սահմանն անցել էր. քանի դնում անտանելի էր դառնում ալս դրութիւնը. ուստի գանգաւ գանգաւոր ետևից՝ դնում, հասնում էր արեգակնափալ Շահաբասին:

Շահաբասը, թէն հէնց առաջին իրեն հասած խնդրից լետու, խտու աղբիւց, որ ոչ ոք չհամարձակուի հալերի մի չտիին անգամ ձեռք տալ և թէն ալդ անսպասելի կարգադրութիւնը մի առժամանակ դադարեցրեց պարսից ամբոխի վարագութիւնը, բայց հետզհետէ կրկին և կրկին սկսուեցին նոյն անգթութիւնները աւելի լամառութեամբ: Նոյն խնդիրներն ու գանգատները և նոյն նորանոր կարգադրութիւններն արքունիքի, ոչ մի հետեւանք չունեցան, միայն ամբողջը, կարծես, աւելի մեծ իրաւունքներով և նոյն իսկ կատաղի պահանջներով էր դիմում հալերին և օգտուում նրանց անպաշտպան դրութիւնից:

Վերջը, երբ Շահաբասը տեսաւ, որ ոչ մի հրաման, ոչ մի օրէնք, ոչ մի պատիժ չէ կարողանում վերջ դնել իր մոլեռանդ և ձրիակեր ժողովրդի կամալականութեան ու վալրադութեանը, որ իր պատիժներն աւելի և աւելի են գրգռում պարսկի ինքնասիրութիւնը, որ ալդպիսով հալերի դրութիւնն իր պետութեան մէջ, բացի այն որ անտանելի է դառնում, ալ մինչև անգամ անպալման երկիւղալի և, վերջապէս, որ ալդպիսով աւելի զօրանում և արագանում է հալերի վերադարձը դէպ իրենց հալերնիք, իսկ ալդ հանգամանքը մեծ արգելք էր դառնում իր քաղաքական ապագալ դիւական նպատակներին — նա մեծ անհանգստութեան մէջ ընկաւ. սկսեց մտածել թէ ինչ կերպով կարողանալ ալդ դրութեան առաջն առնել և ազատել ընդ միշտ մի բուռն ժողովուրդ, որը իր գոլութեամբ ոչ սակաւ օգուտ էր հասցնում էր պետութեանը:

Քանի մտածում էր նա՝ արնքան աւելի ևս դժուարանում էր նրա մտքի իրադրոծումը, որովհետև պարսից հոգևորականութեան պետերն անգամ դէմ էին իր կարգադրութեան և թե ու թիկունք էին դառնում ամբոխի համար. նոքա էլ սկզբունքով արն համոզմանն էին հասած, որ հալ ժողովրդի ինչքը հալալ պէտք է լինի ամեն մի ջերմեանդ մուսուլմանին:

Ահա այս հանգամանքը աւելի ևս անդօր էր կացուցանում Շահին և միանգամայն վտանգաւոր դարձնում հայերի դրութիւնը իր պետութեան մէջ. իսկ ինքը, Շահաբասը, չէր կարողանում իր դիւակաւ մտքերը բաց անել ոչ ոքի առաջ, որպէսզի բերնէ-բերան չանցնին ժողովրդի մէջ և չհասնեն հայերի ականջին ու արդարեւ իր նպատակները ոչնչանան իրենց սաղմի մէջ:

Ուստի նա, արպէս թէ արնպէս, պէտք է իր ժողովրդի վարագութեան առաջն առնէր: Բայց ինչպէս? Նա հանգիստ ու դադար չունէր: Քանի դժուարանում էր իր համար արդ հանելուկի լուծումը արնքան աւելի ևս մտատանջութիւն էր պատճառում իրեն, արնքան աւելի ևս պահանջ էր դրում, գուցէ և ինքնասիրութիւնից դրդուած, մի ելք գտնելու և արդ չարիքի առաջն առնելու համար: Մինչև անգամ ստիպուեցաւ իր նաղիր—վէզիրներին կարծիքներին ու խորհուրդներին էլ դիմել, բայց նրանցից էլ, թէև ոչ ուղղակի, նոյն մոլեռանդութեան ոգին էր փչում, ինչ որ իր հոգևորականութեան պետերից ..

Նա զգում էր, մենակ էր...

Այո՛. և մենակ ինքը պէտք է լուծէր այդ հանելուկը:

Եւ վերջապէս լուծեց: Մոլեռանդութիւնը մոլեռանդութեամբ պէտք է վերջ դնել:—Ահա նրա լուծումը:

Եւ արդ լուծումով նա երեք ցանկալի նպատակի կհասնէր. նախ՝ հայերի ինչքը իրենց հայերին կմնար և արդարեւ նրանց դարձի առաջը կառնէր. երկրորդ՝ իր մէջ նոր լրացած հնարագիտութիւնն լաշողութեամբ իրականացնելուց լետու, նոյն իսկ հայերն իրենք մեծ համակրանքով, հաւատով և ջերմեռանդութեամբ կվերաբերուէին դէպի մեծ մարգարէ Մահամադը և երրորդ՝ որպէս լուրտաւած ազգ հանդիսացնելով հայերին, ապագայում աւելի կդիւրանար նրանց մահմեդակահայցնելու իր միտքը, որով, իր աղքատ աւելանալով հանդերձ կմտցնէր նորա մէջ մի տոկուն, աշխատասէր և համեմատաբար կուլտուրական ազգի բնորոշ լատկութիւնները, որոնցից ինքը քաջ զգում էր, որ դուրկ էր իր ազգը:

Ահա այս վերջինն էր Շահի վաղուցուով փալիպաւած միտքը, որի համար էլ հայերին տարաւ Սպահան. ուստի ամեն անհաշիւ հնարագիտութիւն, ճիգն ու աշխատանք էր թափում, որպէսզի նրանց սկզբից չխրտնեցնէր, նրանց սրտերը կպցնէր

իր երկրին և ապա մահմեդականացնելով նրանց ձուլել իր ազգի հետ ..

Շահն իր անելիքը լաւ ու մանրամասն քննելուց լետով, մի օր հրամայեց իր պալատականներին, որ հետեւեալ օրուայ համար կարեւոր պատրաստութիւններ տեսնեն. ինքը դուրս էր գնալու որսի մօտակալ անտառը:

Պալատականների մէջ մեծ իրարանցում առաջ եկաւ ալդ հրամանից լետով. ամեն ոք կատարում էր իր պարտքը միւս օրուայ համար անթիւրի պատրաստ լինելու: Իսկ ինքը իրանի Պետը, առանձնանալով իր առանձնասենեակներից մէկում, վերցնում է մի շքեղ սադաղաթեալ թերթ, գրում է մարգարտաշար տողերով նրա վրայ ինչ որ բան, մեծ զգուշութեամբ չորացնում է նրա վրայի մնացած թարմ, ու սա. թէ գոյն թանաքը, մեծ հոգացողութեամբ ծալում է ալդ թերթը, ամփոփում է սուլամբալի^{*)} մէջ և դնում իր ծոցի ու սպասում առաւօտեան որսին:

Առաւօտեան արշաւուսին հերդէն ձիւրը, որսկան թաղիւնները, պալատականներից արժանաւորագոյներն, աղեղնաւորներն ու սպասաւորներն արդէն կազմ և պատրաստ սպասում էին իրենց Պետին վահալառ Շահնշահ մեծ Շահաբասին, որ իր սովորութեան հակառակ, շատ սպասել չուեց, դուրս եկաւ պալատից և թռաւ իր նժուղի վրայ:

Երկու ժամ չանցած՝ արդէն անտառումն էին, ուր մի փոքր հանդիստ առնելուց լետով սկսուեց որսը:

Սկզբում թէև մի փոքր դանդաղ, բայց հետզհետէ սկսեց կենդանանալ գործը: Պալատական որսորդներն իրենց ղերերի մէջ մօտան աւելի եռանդով, երբ երևեցաւ վարադր, որին որսալուց լետով՝ լալտնեցին Շահին, թէ մի եղջերու էլ երևեցաւ հեռու: Դարան կանգնած որսկանները լաջողեցրին ալդ եղջերուին քչել ալս կողմը և Շահն ինքը ոգևորուած պատրաստուեց արձակելու գնդակը, բայց իսկույն լետ կանգնեց իր մտադրութիւնից և պատուիրեց, որ անպատճառ կենդանի բռնեն:

Հրամանն անմիջապէս լալտնուեց ամենքին և ամեն ոք պատրաստուեց անթերի կատարել իր պետի պահանջը:

Որսորդները բաժանուեցին իսկույն զանազան կէտերի վրայ և սկսուեց հետեւել եղջերուին: Քիկնապաններն ուզեցան չհեռանալ Շահից, բայց նա հրամայեց նրանց էլ օշնել միւսներին:

Շահը մենակ մնաց: Նախեց իր շուրջը, գտաւ որ ամենազեղեցիկ և լարմար միջոցն է իր միտքն իրագործելու համար, քանի որ ամեն ոք եղջերուի ետեկցն էր ընկած: Նա ձին քչեց դէպի անտառի խորքը, առանձին ուշադրութեամբ

*) Մոմաշոր:

սկսեց դիտել ամեն մի ծառ և վերջապէս կանգնեց մի հաստարմատ ծառի առաջ: Այդ ծառի մէջ գտաւ նա իր փալիսլած մտքի իրագործման ամենալարմար առարկան: Իջաւ ձիուց, հանեց զրպանից իր հաստակոթ և սուր դանակը, կտրեց վերնից ներքեւ մի թղշափ, նրա կեղեւը զգուշութեամբ լետ քաշեց ալդ կեղեւը, հանեց ծոցից մեղ լալտնի քառածալ մագաղաթը մուշամբալում ամփոփած, տեղաւորեց այն բացուած կեղեւի տակ և ապա կեղեւը նույնութեամբ ծածկեց և ամրացրեց ալտալէս, որ շատ փորձուած աչք հազիւ կարող էր նկատել կեղեւի ալդ մասն կտրուած լինիլը: Առանձին ուշադրութեամբ տեղը զննելուց և ապա և ծառը լաւ նշան տեսնելուց լետով՝ վերադարձաւ իր նախկին տեղը և ապա դնաց, միացաւ որսորդներին, որոնք հէնց ալդ ժամանակ լաջողեցրին կենդանի բռնել եղջերուն և պարսկական խոհարութեամբ ներկայացրին լահին:

Շահը հիացաւ եղջերուի գեղեցկութեան վրայ և հրամայեց բոլոր մասնակցողներին առատ խալաթներով վարձատրել. իսկ եղջերուն տանել և պալատական պարտիզում ազատ թողնել, որպէս զի միջոց ունենալ ամեն օր տեսնել ալդ չնաշխարհիկ կենդանուն:

Անցան օրեր, ամիսներ, բոլորեց տարին:

Մի առաւօտ Շահն իբր մեծ լուղմունքի մէջ էր. նա երազում իբր տեսել էր մեծ մարգարէ Մահամադին, որը հրամայեց նրան դնալ անտառը, գտնել մի ինչ որ ծառ, նրա կեղեկից հանել իր, մեծ մարդարէի հրամանը և սրբութեամբ կատարել իր կամքը:

Նադիր-վէզիրները, պալատ հրաւիրուած հոգևոր պետերը, պալատականները դարձեալ մեծ իրարանցման մէջ ընկան. բոլորն էլ համոզուած էին, որ ալդ դատարկ երազ չէր կարող լինել, ալ մի սրբազան տեսիլ, որով մեծ մարգարէն միջոց է ունեցել իր սուրբ կամքը լալտնելու իր ուղղափառ, իրեն հաւատացող ու հետևող ժողովրդին և այն իր ընտրած մեծ մարդի—Շահի միջոցով:

Բայց թնչ պէտք է լինէր արդեօք ալդ Աստուածային սուրբ կամքը: Ահա մի հարց, որի մասին հազար ու մի ենթադրութիւններ էին անում ամենքը. ոմանք մեծ վտանգներ էին գուշակում, իսկ ոմանք մեծամեծ բարիքներ էին նախատեսնում ալդ սրբազան կամքի մէջ:

Կանչուեցան պալատ մի զովդ. լալտնի գուշակներ, որոնք պէտք է ռամ գցելով կամ իրանց գիտեցած միջոցներով գտնէին ալդ ծառը. միևնույն ժամանակ Շահը լալտնեց նրանց որ եթէ երեք օրուալ ընթացքում չկարողանան իրեն տանել և ալդ ծառի առաջ կանգնեցնել, ամենքն էլ կգլխատուին:

Անկասկած գուշակներն աւելի շուտով իրենց գլխատուելու ճշտութիւնը կը գուշակէին, քան ծառի որտեղը լինելը

քանի որ քաջ գիտէին, որ Շահի հրամանն անդառնալի էր:

Երկու օր անցաւ. ամբողջ աշխարհի մէջ արդէն դորդում էր այս դէպքը, և ամեն մի ջերմեռանդ մուսուլմանի համար մահու և կիսանքի խնդիր էր դարձել. ուստի մեծ հետաքրքրութեամբ, ջերմեռանդութեամբ ու աղօթքներով սպասում էին լսել երկնային պատգամը, որ կամ մեծ սարսափի մէջ պէտք է գցէր ամենքին, կամ մեծ ուրախութիւն պատճառէր ընդհանուր մուսուլման աղջին:

Երրորդ օրն արդէն Շահն իր նժուգի վրայ, շրջապատուած նազիր-վէզիրներով, թիկնապահներով, պալատականներով, կրօնապետներով, մօլլաներով ու սէլիդներով և ժողովրդեան անհամար բազմութիւնով, գնում է դէպի մեզ լալտնի անտառը. իսկ որպէս ուղեցոյցներ Շահի, գնում էին գլխիկոր դահիճներով շրջապատուած նրա առաջից դուշակները, չիմանալով թէ ուր են գնում:

Անտառ հասած ժամանակ բազմութիւնը քննում էր ամեն մի ծառ, ամեն մի ճիւղ, ամեն մի փոքր ի շատէ կասկածելի առարկալ բայց բոլորն էլ իզուր: Շահը չէր կարողանում գտնել երազում տեսած ծառը. իսկ դուշակները լուսները գնում էին միմիայն ժամանակ, թողէ վաստակելու վրայ, կամենալով մի քանի վարկեան աւելի ապրել աշխարհում. ուստի նրանք ամեն մի ծառի առաջ կանգնելով, լալտնում էին իրենց կարծիքը, դիտողութիւնները, բայց բոլորն էլ անկասկած, ի զուր:

Կէսօրեակ արեգակն արդէն թեքուելու վրայ էր. բայց սրբազան ծառը չէր գտնվում: Շահն իբր համբերութիւնից դուրս եկաւ, հրամայեց դահճապետին գլխատել դուշակներին:

Դահիճների կողմից ամենայն ինչ պատրաստ էր և դահճապետն արդէն սպասում էր պետի նշանին, երբ Շահն աչքերը լառած, շարունակ նալում էր հեռւում մի կէտի վերայ. մի փոքր անցաւ և նա ձին քշեց դէպի այդ կէտը, կանգնեց մի ծառի մօտ և շարունակ նայեց այդ ծառին: Այդ իրեն լալ լալտնի ծառն էր: Նշան արեց դահճապետին սպասելու և ձեռքի շարժումով սօտ կանչեց բազմութեան:

— Թապալում գոռաց նա:

— Իիսմիլլահ ռահման ռահիմ, երկիւղածութեամբ մրմնջալով բազմութիւնը շրջապատեց այդ նուիրական ծառին:

— Էէնց այս ծառն էր, որ տեսալ երազում, ասաց Շահը բարձրաձայն հաւաքուած բազմութեան. միևնույն դիրքով, միևնույն ճիւղերով ու ձևով. կտրեցէք ծառի կեղէն ալսպէս. և ցոյց տալով տեղը՝ աւելացրեց. մեծ մարգարէն, օրքան լիշում եմ, իր սուրբ մատով ցոյց տուեց ինձ ալստեղի վերայ:

Անմիջապէս կատարուեց հրամանը և... ո՛վ դարմանք...

կեղևի տակից (որի կտրուածքը ժամանակի ընթացքում միացել-մերուել էր ամբողջ կեղևի հետ և ոչ մի հետք չէր թողել վրան, երևաց մի ինչ որ բան փաթաթած մուշամբալի մէջ.

Ամբողջ բազմութիւնը ծունկ չոքեց ջերմ աղօթքներով. իսկ Շահը իր ձեռքով հանեց կեղևի տակից փաթեթը, չոքեց, մի քանի անգամ համբուրեց ու դրեց ճակատին և ապա բաց արեց մուշամբան, հանեց միջից մաղաղաթեալ քառածալ թերթը, կրկին անգամ համբուրեց ու դրեց ճակատին և ապա զլխի վերայ բռնած մօտեցաւ աւագագոյն կրօնապետին, դարձեալ մի քանի անգամ համբուրելով տուեց նորան. նա ևս համբուրելով և ջերմաջերմ աղօթքներ մղմնջալով, հրաման ստացաւ Շահից բարձրաձայն կարդալու ի լուր ամենեցուն.

Եւ կրօնապետն իսկոյն կատարեց վեհի հրամանը:

Մագաղաթի մէջ գրուած էր մօտաւորապէս հետեւեալը.

Իմ սիրեցեալ ջերմեռանդ մալիման ազգին և ժողովրդին.

Սորանով պատուիրում եմ իմ ուղղափառ ազգին՝ ալսուհետև չմօտենալ ոչ մի անհաւատի. ամեն մի ջերմեռանդ մալիման չը պէտք է շփուի նրանց հետ. չ'պէտք է ուտի կամ խմի նրանց ամաններէից. չ'պէտք է բանեցնի նրանց ցորենը. չ'պէտք է ուտի նրանց հացը, մորթած անասունը. չ'պէտք է հազնի նրանց ձեռագործն ու շորը. մինչև անգամ ձեռքը ձեռքին, շորը շորին չ'պէտք է կպցնի. ապա թէ ոչ ալղալիսի մալիմանը մուրտառուած կհամարուի և զրկուած կլինի ապագայ կեանքի մշտնջենաւոր փառքերից ու հուրիններից:

«Աստուծոյ ծառալից ծառայ՝ Մարգարէ Մօսամէդա:

Կրօնապետը կարդալուց լստով՝ շատ զգացուած քարոզ խօսեց, որով խստիւ պատուիրեց ժողովրդին մեծ մարգարէի անդարձ հրամանը կատարել և անհամար անէծքներ թափեց այն մուսուլմանի զլխին, որը կլանդոնի սորա հակառակ ընթացք բռնել. նաև հրամայեց բոլորին ի նշան անդարձ խոստման մի քանի անգամ ծունկ չոքել և զլուխները կպցնել հողին:

Եւ բազմութիւնը միաբերան երդուեց կատարել մեծ մարգարէի հրամանն անթերի:

Ինչ ասել կուզի, որ Շահի այս հնարագիտութիւնը, ալսալիսի հանգամանքների մէջ, անասելի, աներևակալելի լեղափոխութիւն պէտք է գցէր մուլեռանդ պարսիկ ժողովրդի և նրա ամբողջ երկրի մէջ:

Այդ օրից սկսած մինչև այսօր, պարսից շիա ազգը մուրտառ անհաւատ է անուանոււմ հալին և ընդհանրապէս քրիստոնեաներին:

Այդ ֆանատիկոսութիւնը դարձել է նրանց համար որպէզ մի կրօնական պահանջ:

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ